

զխաւուրս արծաթէ ոսկէջրած: Ապա աղա-
 նին, զայլմնին. ապա փաշայնին. երկու զազի
 էսքէրն. զկնի մուֆտին, ապա վէզիրնին,
 635 պէտավի եւ արապ ձիօք: Եւ բախտքն ամէն
 մարգարտով եւ ակամբք յօրինեալ. զոր այլ
 երկիր կարծեմ թէ եւ թագաւորք ոչ ունին
 այնպիսի կազմուածք: Եւ զկնի այսր ամե-
 նայնի զայ մեծ վազիր աղէմն. եւ զկնի թա-
 640 գաւորն հեծեալ ի ձի հրաշալի եւ զարմա-
 նալի, զուտր ոսկիակազմ. իսկ թամքն,
 տիկտիկն եւ ամենայն բախտքն սաֆի մեծա-
 մեծ մարգարիտ եւ ակամբք զարդարեալ, որ
 փայլզփայլի տան եւ զաչս մարդկան պշու-
 645 ցանեն. զոր ոչ կարէ մարդ զին զնել կամ
 զիյմաթն գիտնալ կամ լեզուաւ պատվել
 զմեծութիւնն անգին խազնային կամ զձիունն,
 որ ոչ գտանին առ այլ թագաւորս: Այլ եւ
 ունէր ի զլուխն մեծագին տօլպանտ. եւ եր-
 650 կու սօրղուճ ի վերայ անգին ճուհարով կազ-
 մած, որ մինն ձՈՒ զուռուչ կ'արժէր: Եւ
 հուպ թագաւորին յետուստ երկու գիլիֆ-
 դար ազնաւորք, ահազնատեսիլ եւ քաջք,
 մաղերն երեսն ի վայր կախ, ունելով ի ձեռս
 655 պալթայք: Ապա զկնի խազնատարն եւ խըզ-
 լարազան: Եւ որք զկնի եւ զհետ երթան, եւ
 որք սէյրի կ'անեն՝ աղազակեն՝ «հո՛ւ, եա-
 հո՛ւ». իրր թէ երկրի աստուած է: Այսպիսի
 փառօք, պերճ եւ ճոխ փարթամութեամբ